(գր. 1236 ին) մագաղաթեայ պահպանակին վրայ հետեւեալ յիշատակարանով. «Եղբայր բարի, գիտացիր որ ես Մարտիրոս մեղաւոր և անարժան՝ կոչիմ եպիսկոպոս Մարտնոյ, և դրացի Գառայ յԱմիթի Տիառպէքր. ես Երուսաղէմ գնացի և այնկից ի Պետրոս և Պողոս ի մեծն Հռոմ, և անկից ի Ս. Յակոբն ի Կալիցի և դարձայ, յայս ժամն էր թվական Հայոց ՋՂ (1541) ամի որժամ դարձայ ի Ս. Յակոբայ»։

Աւելի ուշ՝ 1609 թուականին կը հանդիպինք Ունիթոռներու կարգէն՝ Օգոստինոս Բաջենց ապարանեցիին, որ յետոյ Նախիջեւանի եպիսկոպոս կ'ըլլայ։ Սա մեկնելով Սպահանէն կ'անցնի Ռուսաստան – ինչպէս որ ինք իսկ կը պատմէ իր կենսագրական – ուղեգրական յուշերուն մէջ[1] – յետոյ Լեհաստան, Գերմանիա, և հուսկ Սպանիա։ Հետաքրքրական են իր տպաւորութիւնները նախ Լիզպոնա և Մատրիտ քաղաքներուն, Լակուռիալի վանքին, Սալամանքայի, Ծամորայի և վերջապէս Ս. Յակոբի Ուխտավայրին։ Երբ իր ուխտը կատարած Մատրիտ կը վերադառնայ՝ կը հանդիպի հոն հայ եպիսկոպոսի մը. թերեւս ան ալ ուխտաւոր։

*
* *

Անցնինք այժմ Մարտիրոս եպիսկոպոսի ուղեգրութեան մանրամասնութեան։

Ինչպէս ըսինք, ան Երգնկայէն կը մեկնի 1489 ի Հոկտեմբեր 29 ին և կու գայ Կ. Պոլիս։ Յաջորդ տարին 1490 Յուլիս 11 ին՝ ուղեկից ունենալով Վրթանէս անուն սարկաւագը՝ կը նաւէ դէպի Վենետիկ՝ զոր կը նկարագրէ մեծ զարմացումով ըսելով թէ «ամէն մէջ ծովն է շինած»։ Միայն՝ Ս. Մարկոսի փոքր հրապարակին մէջ երկու կոթողներն յիշած ատեն կ'ըսէ, «մէկին վրայ թեւաւոր առիւծ» Ս. Մարկոսի նշանակը. բայց կը սխալի երբ «մէկալին Ս. Գէորգ է կանգնել» կ'ըսէ. վասն զի վերջինս կը ներկայացնէ Ս. Թէոդորոս։ Ներսէս հայկազն էր որ Գոթացիներուն յաղթելէն վերջ հոն՝ ուր այսօր Ս. Մարկոս կը կանգնի՝ շինած էր տաճար մը յանուն Ս. Թէոդորոսի 552 ին և նոյն Սուրբը պաշտպան հռչակած Վենետկոյ։ Հին եկեղեցին կը քանդուի 828 ին՝ երբ Ս. Մարկոս Աւետարանչի մարմինն Եգիպտոսէ բերուելով այս նոր հրաշակերտը կը կանգնեն։

Մարտիրոս եպիսկոպոս քասնեւինն օր Վենետիկ այցելելէն վերջ՝ ծովով կը մեկնի Անքոնա, յետոյ կ'անցնի Հռոմ՝ հինգ ամիս մնալով հոն։ Կը պատմէ իր ուխտը Ս. Պետրոսի և Պողոսի գերեզմաններուն վրայ և երիցս Ս. Պապէն ընդունուիլն և յանձնարարական նամակ առնելը։

1491 Յունիս 9 ին կը թողու Հռոմը և կ'ուղղուի դէպի Զուիցերի, Գերմանիա, այցելելով հետզհետէ Բոստանցա, Պազիլէա (Պազէլ), Ֆրանքֆուրթ, Ֆրիպուրկ, Սթրազպուրկ, Գապէլ, և հուսկ Բոլոնիա, ուր կը նկարագրէ այդ քաղաքի հին և հարուստ մայր եկեղեցին։ Հոս ալ 22 օր մնալէն յետոյ Հոկտ. 25 ին կը մեկնի և կը հանդիպի Էքս–լա–շափէլ, կ'անցնի Ֆլանտրէն՝ ուր շատ կը նեղուի տեղւոյն լեզուին անծանօթ ըլլալով։ Երկար ճամբորդելէն վերջ կը հասնի յաշխարհն Ընկլզաց, այսինքն Անգլիա, սակայն դժբախտաբար լռելեայն կ'անցնի այդ երկրի մասին։ Ապա կը վերադառնայ Գաղղիա և դէպի հարաւ ուղղուելով Բարիզ՝ նախ օր մը կանգ կ'առնէ և կ'այցելէ Սան Տօնիժ (St. Denis)՝ Ս. Դիոնեսիոս, ուր թագաւորներու գերեզմանները

---

1. Տես Կ. Յ. Բասմաջեանի «Բանասէր», հա. Ա. Գիրք Գ. էջ 218–235, հր. Բարիզու Ազգ. Մատ. հայերէն թ. 3 ձեռագրէն (ըստ Բասմաջեանի՝ թ. 10)։